



ՎԵՀԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Ժամանում Կահիրե

Հունվարի 13-ին, չորեքշաբթի, հայրենական ՏՈՒ-104 ինքնաթիռը՝ առավոտյան ժամը 12-ին, 3 ժամվա ապահով և հանգիստ թռիչքից հետո, իջնում է Վիեննայի օդանավակայանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ջերմորեն դիմավորում են Վիեննայի հայ գաղութի ներկայացուցիչներ, գաղութային վարչության նախագահ Ս. Կարապետյանը, Սիմոն Արմանը, Ա. Հինդլյանը, Ա. Ութուշյանը և ուրիշներ:

Ս. Կարապետյանը, հանուն Վիեննայի հայ գաղութի, սրտագինս ողջունում է Վեհափառ Հայրապետի տարանցիկ այս շնորհաբեր այցելությունը:

Նորին Ս. Օծությունն իր գոհունակությունն է հայտնում ջերմ դիմավորման և ողջունի արտահայտությունների համար, խոսում է իր Ադդիա-Աբերա ուղևորության մասին և իր հայրապետական ողջուններն ու օրհնությունն է բաշխում համայնքին:

Գաղութային վարչությունը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն, որն անցնում է ջերմ, հայկական մթնոլորտում:

Նորին Ս. Օծությունը չորս ժամ Վիեննայում հանգստանալուց հետո, երեկոյան ժամը 4-ին հունդական KLM ինքնաթիռով մեկնում է Կահիրե, ուր հասնում է 8 ժամվա

թռիչքից հետո, գիշերվա ժամը 1.30-ին, Բելգրադ, Ստամբուլ և Դամասկոս հանդիպելուց հետո:

Եգիպտահայ գաղութը, սրտատրոփ, գիշերվա ուշ ժամին իսկ, անձկագին հուզումով և համազգային խանդավառությամբ, Կահիրեի միջազգային օդանավակայանում սպասում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալստյան:

Վեհափառ Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին դիմավորելու համար, օդանավակայան էին ժամանել Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Ս. Զավեն վարդապետ Չինչինյանը, հյուրաբար Կահիրեում գտնվող Ս. Կյուրեղ վարդապետ Գրիկյանը, Կահիրեի առաջնորդական փոխանորդ Ս. Սահակ Բահանա Շաֆարյանը, Ս. Արշամ Բահանա Բոզոյանը, Կահիրեի քաղաքական ժողովի ատենապետ Օհենիկ Մայանը, Արտո Պրլբգտանյանը, Խաչիկ Ռեխայանը, Ստեփան Լաչինյանը, Դանիել Ղազարյանը, Հայկազուն Քյուրֆեյանը, Հրազդան Պայանը, Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովի ատենապետ Մարտիկ Զարբանեյանը, քաղաքական ժողովի անդամներ Վահե Արթինյանը, Հայկ Քիրազյանը, Վահան Ալեքսանյանը, «Տիգրան Երկաթ»-ի կողմից Միհրան Թարգոմյանը, եգիպտահայ մշակութային միությանց և հայ մամուլի՝ այդ թվում «Արև»-ի, «Նուսաբեր»-ի, «Զահակիր»-ի, «Արաքսի»-ի, «Սավանակ»-ի և այլ հրա-

տարակուսությունների ներկայացուցիչներ, ազգային վարժարանների տեսչական և ուսանողական կազմը, մտավորականներ, թղթակիցներ և հյուրեր:

Վեհափառ Հայրապետը, ընդհանուր խանդավառության և ոգևորության մեջ, ծափերի և ուրախ բացականչությունների տարափի տոսակ, իջնում է ինքնաթիռից, օրհնելով բազմությունը:

S. Զավեն վարդապետը նորին **Ս. Օծուխյան** մատուցում է ավանդական աղն ու հացը:

Հանուն եգիպտոսի բարեխնամ առաջնորդ **ՅՏ. Մամբրե** արեպիսկոպոս **Սիրունյանի**, որը պաշտոնական գործով գտնվում էր Ադդիս-Աբեբա, հանուն եգիպտահայ ազգային իշխանությանց և ողջ համայնքի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհարբ պալատը ջերմորեն ողջունում է Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ **S. Զավեն** վարդապետը:

Նորին **Ս. Օծուխյունը**, ողջունելով ներկաներին, իր գոհունակությունն է հայտնում ուղղիչներին այս ջերմ դիմավորության և ընդունելության համար, օրհնում է եգիպտական հյուրընկալ հողը, նրա բարեխնամ կառավարության անդամներին և եգիպտոսի ազնիվ, բարի ժողովրդին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Սեմիրամիս» հյուրանոցը, ուր նորին **Ս. Օծուխյան** հատկացվում է մասնավոր հարկաբաժին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

Հունվարի 14-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությունում իր շքախմբի անդամների և Կահիրեի, Ալեքսանդրիայի ազգային իշխանությանց ներկայացուցիչների, այցելեց Քուպեի հանրապետական պալատը, ուր ստորագրեց այցելուների հուշամատյանում և սիրալիք տեսակցություն ունեցավ եգիպտոսի նախագահ նորին Գերազանցություն Արդել Նասերի անձնական ներկայացուցիչ հետ:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, «Հրաշափառ»-ով մուտք գործեց Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցին:

Եկեղեցու բակում և ներսում ժողովրդական խանդավառ մի բազմություն երկյուղածությամբ սպասում էր նորին **Ս. Օծուխյան** ժամանմանը:

Եկեղեցական թափորը հանդիսավորությամբ մուտք է գործում եկեղեցի: Աջա-

կողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել ազգային իշխանությանց անդամները, բույր եկեղեցիների ներկայացուցիչները, այդ թվում Ալեքսանդրիայի Ղպտի Պատրիարք նորին Սրբություն Աբունա Կիրիլոս Բ-ի ներկայացուցիչները, հայ կաթողիկ համայնքի պետ Հ. Գրիգոր վարդապետ Կիրիլյանը, Կահիրեի ավետարանական համայնքի հովիվ վերապատվելի Վահան Թուրիկյանը և ուրիշներ:

Գոհաբանական աղոթքից ու հայրապետական մաղթանքի կատարումից հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սույն պատմական այցելությունը Կահիրե ողջունում է **S. Զավեն վարդապետը**, որը թարգմանը հանդիսացավ ողջ եգիպտահայության անսահման սիրույն, խորը հավատին, հավատարմության և որդիական ակնածանքին դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նրա արժանավոր Գահակալը: Հայր սուրբն իր խոսքը եղբարեկամ է ասելով. «Վեհափառ Տեր, մեր ժողովուրդը Ձեր բարձր անձին, Ձեր վեհ էություն մեջ կտեսնե մեր պատմության ոգեղինացումը, մեր աստվածարյալ հայրապետներու, եռամեծ վարդապետներու առաքինության, հայրենասիրության մարմնացումը»:

Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց հետևյալ ոգեշունչ բարոզը.

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ: Ամէն»:

Աստուծո ողորմությամբ, ահա այս երեոդ անգամն է, որ մուտք կգործենք այս եկեղեցի են երս, բերելու համար ձեզի՝ բյուրիդ, սիրելի՛ հավատացյալներ, Մեր սիրտեն բխած ողջույններ և օրհնություններ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն:

Թեև այս անգամ ծրագրված չէր Կահիրե Մեր կանգ առնելը, այնուամենայնիվ, երբ այս անպասելի վայրէջքը եղավ, թեև Մեզ ուշացուց Մեր նպատակեն մեկ օրով, բայց երբ տեսանք ձեր սիրելի դեմքերը, ձեր հուզումը, ձեր աչքերուն արցունքը, Մենք անշուշտ ամեն բան մոռցանք, նույնիսկ Ադդիս-Աբեբայի ժողովը, և ուրախ եղանք, որ ահա գտնե՛ք անի մը ժամ ձեզի հետ միասին կրնանք բլլալ: Մենք երբ ըսինք՝ «նույնիսկ Ադդիս-Աբեբայի ժողովը մոռցանք», անշուշտ թերագնահատում մը չուզեցինք ընել այդ ժողովի կարևորության, բայց ինչ Մեր մեղքը պահենք, Մեզի համար, Ամենայն Հայոց Հայրապետի սրտին համար, ամեն բանն վեր է մեր հարազատ ժողովուրդը և մեր միությունը, մեր փոխադարձ սերը և մեր բոլոր հոգևոր, ազգային և հայրենասիրական իմաստով, երազներու և իդեալներու իրականացումը: Ահա այս պարունները, ինչպես

նախորդ անգամներուն, այս անգամ ևս պահ մը կարենան Մեր հոգվույն մեջ և կզատեն տիրական:

• Բայց Մենք պարտական կզգանք Մեզ ողջույն և օրհնություն բերելու նաև այս հայրենիքին՝ եզրատոսին, հին, մեծ, փառավոր այս երկրին, որ նույնպիսի փառավոր պատմաշրջան մը սկսած է բոլորել այսօր այլ զարգանալով նոր օրերու պայմաններու մեջ, հայրենանվեր ղեկավարներու առաջնորդության ներքև, որոնց գլուխը կզտնվի մեր օրերու միջազգային կյանքի մեջ ամենամեծ պետական գործիչներն են կըր, և այս երկրի մեծ վերաշինողը՝ նախագահ Բաժմալ Արդել Նասեր:

Մենք կրե՛նք մեր օրհնությունը Ս. էջմիածնեն հանուն մեր եկեղեցիին և մեր հավատացյալ ժողովուրդին՝ այս երկրին, եզրատական ազնիվ և մարդասեր ժողովուրդին և անոր մեծարգո նախագահին, մաղրանե՛ներով բարի, մաղրանե՛ներով բազում, որպեսզի այս երկիրը բարօրության և խաղաղության մեջ հառաջդիմե, ծաղկի և հասնի քաջ առ քաջ, դեպի իր ամենաազնիվ ձգտումներուն և երազներուն իրականացման:

Կո՛ւր հայերդ, այստեղ, փոքրիկ գաղութ մը, այս մեծ երկրին մեջ, կրճական համայնք մը կկազմեն, և կխորհինք, թե միշտ այսպիսի սիրով և երախտագիտության զգացումներով պետք է շարունակեն վարել ձեր կյանքը այս հյուրընկալ, բարի երկրին մեջ, որպեսզի արժանի դատնա՛ր այս պետության կառավարության և ժողովուրդի զնահատանե՛րին:

Սիրելի՛ ժողովուրդ, գուցե պիտի ուզե՛իք, որ Բանի մը խոսք այլ քսենք Մեր այս նաև պարհորդության կապակցությամբ, որ բավական առնեն ի վեր ծրագրված էր: Կրճանք քսել, թե ան մոտ մեկ տարվան պատմություն ունի իր ետին: Նախաձեռնությունը կպատկանի կրթական Կայսեր, նորին Վեհափառություն Հայր Սելասիեին, որ ֆրիստոնյա մեծ հոգի մըն է, հավատացյալ Կայսր մը, տեսակ մը հին օրերու փառավոր և սուր ավանդությունները շարունակող մեր օրերուն մեջ: Հայոց իշխաններն ու քաղաքագետներն այլ հինհին դարերուն, այսպիսի նախաձեռնություններ կատանձնե՛ն՝ ի մի հավաքելու եկեղեցիներու պետերը, ինչ-ինչ կարևոր առիթներով: Ահա այսպիսի մտածում մը ունեցած է նաև Սրովպիա Վեհափառ Կայսրը: Նախաձեռնություն մը և առաջարկություն մը, որ Մեզի շատ հանելի է, որովհետև մենք քույր եկեղեցիներ ենք, այս հինգ եկեղեցիներս, արևելյան հին ուղղափառ եկեղեցիներ, որոնք նույն հնագույն ավանդությունները պահ-

պանած են: Եվ գրեթե բոլորս այլ նույն զարհուրելի նախաազգիք ունեցած ենք դարերու ընթացքին, և սակայն այսօր հասած ենք կյանքի և խաղաղության ափին, և անա առիթը կհանդիսանա. որպեսզի մենք՝ այլ հինգ եկեղեցիներու ներկայացուցիչներ, մի հավաքվինք, միասին ազգքենք, միասին մտածենք մեր ներքին միասնության ամրապնդման համար. ինչպես նաև ծրագրենք կազմենք միասին գործելու, բեղհանալու ֆրիստոնյայունը հուզող հարցերու կապակցությամբ և հատկապես մեր եկեղեցիները և մեր ժողովուրդները հուզող խնդիրներու առնչությամբ:

Ահա այսպիսի Աստվածահան ծրագրի մը նվիրականացումն է, որ Մեզ կուրախացնենք ինչ Մենք, իրրև Հայ եկեղեցվա Դուխ, Մեր պարտականությունը նկատեցինք ընդունի այս քաղցր հրավերը և մասնակցի այս ժողովին, զլիսավորելով Հայ եկեղեցվա պատվիրակությունը, մեկ և անբաժան: Մեն հարմար գտանք, և շատ հանելի ու օգտակար, որպեսզի այս պատվիրակության մեջ հրավիրենք նաև Մեր եղբայրները, Հայ եկեղեցվա նվիրապետական Արքաներու գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիա Կարգիկոսության և Նուստադեմի և Կոստանդնուպոլս հայոց Պատրիարխությանը:

Կխորհինք, թե միջազգային մակարդակ վրա հրաշալի առիթ մը պիտի ըլլա, որպեսզի հաշտ մեր ժողովուրդին և հաշտ օտարներուն անգամ մը ևս ի հայտ գա, գեղեցիկ և պայծառ կերպով, Հայ եկեղեցվա միասնություն և ներքին սիրու ոգին:

Այսպիսի ուրախ առիթով մըն է, որ Մեն կուղղվինք դեպի Աղդիս-Աբեբա: Բայց Մեն չենք տարակուսիք, թե այս ժողովին արդյունքները պիտի ըլլան աստվածահան մեզի՝ հայերուս համար գոտեպնդիչ և ուրախալի: Մանավանդ մեր դարաշրջանին, այլ վերջին Բանի մը տասնամյակներուն, երկխոսի այնքան հետևողական կերպով եկեղեցիներու մեծնեցման, եկեղեցիներու եղբայրության, միության մասին, անա այսպիսի միջազգային կամ միջեկեղեցական ընդհանուր մթնոլորտի մեջ, կկարծենք, շատ շատ ներդաշնակ պիտի հնչե՛ն նաև այս ժողովը միաբնակ հին ուղղափառ եկեղեցիներու, որոնք իրենք իրենց սահմանին մեջ, այլ նույնը պիտի իրականացնեն, այսինքն պիտի ամրապնդեն իրենց ներքին եղբայրություն և միությունը:

Այսպիսով, տակավ առ տակավ, պիտի իրականանա բոլոր ֆրիստոնեական եկեղեցիներու ճշմարիտ, ավետարանական եղբայրությունը, անշուշտ ամեն մեկ պատմական

եկեղեցի պահպանելով իր բոլոր հոգևոր և ազգային ավանդությունները: Վերջին 1000—1500 տարիներում ընթացքին Մեր եկեղեցիները, դարերու հոլովույթով ստեղծված, հրաշա ի հուշարձաններ են, ամեն մեկը իր ազգային սահմաններեն ներս հարկնված հոգեխաչ հայրապետներու շունչով, հավատավոր ժողովուրդի հոգիով, հանատակներով և սուրբերով:

Մենք կրավանքին Բրիտանական եկեղեցիներու միությունը, Քրիստոսի Ավետարանին իմաստով, Քրիստոսի մեջ սիրա իմաստով: Ամեն մեկ պատմական հին եկեղեցի, մանավանդ ամեն մեկ ազգային եկեղեցի, ինչպես Հայկական եկեղեցին է, պետք է պահեն իր բոլոր սուրբ ավանդությունները, իր դավանական մտածելակերպը, իր ազգային արժեքները և իր անկախ ու ինքնագույն գեղավարությունը, իբրև պատմական, ազգային, Բրիտանական եկեղեցի:

Մանավանդ որ Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին, հատկապես այսօրվան մեր ազգային կյանքի պայմաններում մեջ, ազգային առաքելության և ինքնապահպանության մեծ, նվիրական, սուրբ գործ մը ունի: Հայաստանյայց եկեղեցին այդ դերը, այդ առաքելությունը անշուշտ իր ուսերուն վրայեն իրավունք չունի նետելու: Ընդհակառակը, հայ հոգևորականի մը համար փառք է և պատիվ՝ ծառայել Աստուծո և մեր ժողովուրդին միաժամանակ:

Սիրելի՛ ժողովուրդ, ժամերը կանցնին և կերևի շուտով Մենք պիտի բաժնեվինք ձեզմա այսօր: Մեր խոսքը վերջացնելե առաջ, անգամ մը ևս կուզենք ձեզի Մեր մաղթանքները բաշխել, Մեր անկեղծ, Մեր սրտեն բխած բարի մաղթանքները, որ Աստված ձեզի բոլոր խաղաղ և քաջառողջ պահպանե և ձեր բոլոր ազնիվ գործերուն հաջողություն տա:

Ձեզմա ամեն մեկուն կյանքը մեզի համար քանակագին է, և վստահ եղեք, Մենք, Ս. էջմիածնի մեջ, միշտ կ'մտածենք ձեր մասին: Երբեք չենք մոռնար զձեզ բոլորը Մեր աղոթքներուն մեջ: Մեզի համար, Արարաբի նալվածքին տակ, Հայաստանի հողին վրա ամուր կանգնած, Ս. էջմիածնի նվիրական կամարներուն ներքե, Մեր հայացքը կրնող գրկե համայն հայ ժողովուրդը անխորհր, Մեզի համար չկան տեսակ-տեսակ հայեր, այս կողմի կամ այն կողմի հայեր, Մեզի համար կան հայերը միայն, և հետևաբար Մեր աղոթքը կտարածվի բոլորին վրա, և Մեր հայացքը կրնող գրկե բոլորը: Մեր մաղթանքները կուղղվին դեպի բոլոր հայերը

անխորհր և Մենք կրնանք, որ բոլոր հայերը, գուն մեր Ս. եկեղեցի կամարներուն տակ, բլլան մեկ սիրտ մեկ հոգի, միշտ անբաժան, և մտածեն հավաքաբար ավագ խնդիրներու, սեպուն խնդիրներու մասին, հատկապես Սփյուռքի պայմաններուն մեջ, կազմակերպված ձևով աշխատանք տանելու համար, որ պետքի հայ ժողովուրդը կարողանա առավելագույն հաջողությամբ հառաջ տանիլ իր ինքնապահպանության, իր ազգապահպանության գործը, եկեղեցիով, և դպրոցներով, հայրենիքի հետ սերտ կապեր հաստատելով և բոլոր այն միջոցներով, որոնք օգտակար կրնան հանդիսանալ այս նվիրական գործի նամբուն վրա:

Այսպիսով միայն քաջ առ քաջ պիտի կարողանանք հաջողություններ արձանագրել: Մենք Ս. էջմիածնեն այս կենտապեղենք, կաշխատինք օգտակար բլլալ ձեզի, բոլորիդ և համայն Սփյուռքի Մեր պանդուխտ զավակներուն:

Մնացե՛ք խաղաղությամբ: Աստուծո օրհնությունը ձեր վրայեն անպակաս բլլա, չեն պահեն ձեր այս սուրբ և գեղեցիկ եկեղեցին: Միշտ հավաքվեցեք այստեղ, բոլորդ, ոչ ոք եկեղեցիեն դուրս չմնա, որպեսզի ոչ ոք հայ կյանքեն դուրս չմնա, որպեսզի ոչ ոք Ս. էջմիածնի օրհնությունեն հեռու չմնա և որպեսզի ոչ մեկ հայ Աստուծո օրհնությունեն չհեռանա:

«Շնորհիք, սէր և խաղաղութիւն Տեսոն Մեռոյ Յիսուսի Քրիստոսի Բրիտանի Եղիցիւն ընդ Ձեզ և ընդ ամենեւեան, այժմ և յաիտեան: Ամէն»:

Եկեղեցական արարողութիւննից հետո, Վեհափառ Հայրապետը բարձրանում է առաջնորդարան, որտեղ «Շնորհալիք» երգչախումբը, է. Հակոբյանի ղեկավարութեամբ, կատարում է «Տէ՛ր, կեցո՛՛ր ու զՀայս» մաղթերը և «Ամեն հայի սրտից բխած» մաղթանքը: Առաջնորդարանի ընդունելութեան դահլիճում, Կահիրեի քաղաքական ժողովի ատենապետ Օննիկ Մովսէսը, հանուն ազգային իշխանութեաց և համայն հայ զաղութի, ողջունում է Վեհափառ Հայրապետի ժամանումը և բարի դալուստ մաղթում: Ընդունելութիւնը վերջանում է Վեհափառ Հայրապետի ողեշունչ և հայրենասիրական պատգամով և «Պահպանիչ»-ով:

Բոլոր ներկաները աշահամբույրով իրենց սերն ու որդիական հարչանքն են մատուցում ազգիս սիրելի Հայրապետին, արժանանալով Նրա օրհնութեան:

Թեյասեղան Նուպարյան վարժարանի Պրլըգտանյան սրահում

Հունվարի 14-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Պրլըգտանյան սրահում, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպվել է թեյասեղան, մասնակցություններ ազգային-իշխանություն, բոլոր միությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Ավելի քան 700 հրավիրյալներ համախմբվել են բնտանեկան սեղանների, շուրջ, նույն հարկի ներքո, նույն զգացումների, նույն խոհերի, տպավորությունների տակ, վերջին գիշերը անցկացնելու համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Սեղանների շուրջ ստեղծվել է ջերմ, հայկական մթնոլորտ. «զի բարի, զի վայելուզ զի բնականացն հրաբար ի միասին»:

Գործադրության է դրվում գեղարվեստական մի ճոխ հայտագիր՝ պատրաստված Կոկանյան սրահի և Հայ գեղարվեստասիրաց միության անդամների կողմից:

Հանդիսությունը ղեկավարում է Նուպարյան վարժարանի տնօրեն Տիգրան Պապիկյանը, որն ընթերցում է գեղեցիկ և տպավորիչ ողջույնի հետևյալ խոսքը.

«Անպատմելի է այն քաղցր հուզումը, որ կհամակեն ողջ եգիպտահայությունը ամեն անգամ, որ Ամենայն Հայոց Հայրապետը այցի կուգա մեզի:

Եթե կարելի չէ ինձի համար այսօր մի առ մի թվել անոր պատճառները, կարելի է սակայն խտացնել զանոնք բոլորը մեկ մտածումի և մեկ պատկերացումի մը մեջ ու ըսել, բոլորս անխտիր Ձեր մեջ կտեսնենք Առաքելական Հայ Եկեղեցիի առաքելատիպ հայրապետներու հարազատ շառավիղն ու մարմնացումը:

Այդ հուզումը նույնպես ուժեղ է և խանդավառող, նույնիսկ, երբ այսօրվան նման, Ձերդ Վեհափառությունը իր ուղեորության ճամբուն վրա մի քանի ժամվան անցք մըն է, որ կկատարեն մեզ մոտ:

Օգտվելով այս օրհնաբեր պատեհությունին, Կահրբեի ազգային իշխանությունը փափագեցավ համեստ այս սեղաններուն շուրջ համախմբված տեսնել մեր գաղութի բոլոր մարմիններու և կազմակերպություններու ներկայացուցիչները անխտիր, բարի գալուստ և նույն ատեն բարի ճանապարհ մաղթելու Ձերդ Վեհափառություն:

Այս հանդիպումը տեղի կունենա այս անգամ Նուպարյան ազգային վարժարանի այս

հանդիսարանին մեջ, Պրլըգտանյան հանդիսարանին մեջ: Վստահ ենք, որ այս պահու հրճվանքի անհուն զոդով մը կհամակվին հոգիները մեր վարժարանի բոլոր բարերարներուն՝ երջանկահիշատակ Պողոս Նուպար Տիգրան Մերճանյան և Օննիկ Պրլըգտանյան: Ու անհունորեն վարձատրված կողան անոնք իրենց բարի գործերուն համար՝ Ձերդ Վեհափառության սրբազան ներկայությունը կրկին անգամ օրհնված տեսնելով այս հաստատությունը:

Ներկաներեն շատերը պիտի արտահայտեն իրենց հրճվանքը խոսքով, երգով և այլ ելույթներով: Սակայն դժբախտաբար կա մեծ բացակա մը, վարժարանի աշակերտությունը, որ հասկնալի պատճառով այս սրահին մեջ չի գտնվիր այս պահու: Անոնք բոլորը աղոթքներ ունին Ձեզի համար, աղոթքներ իրենց անմեղ շրթներեն բարձրացող, որոնք ավելի ուղիղ և լսելի կհաննեն Բարձրալիին: Ու վստահ ենք, որ անոնցմով զորացած, Վեհափառ, Դուք անշեղ հավատքով կհարատեք հայրապետական Ձեր սրբազան առաքելության մեջ, վասն բարգավաճման էջմիածնի Մայր Աթոռի և վասն անխորտակելի միասնականության Հայաստանյայց Եկեղեցվոք:

Հանուն ազգային իշխանության, Վեհափառ Հայրապետին ողջունում է Քաղաքական ժողովի անդամ Հայկազուն Քյուրճյանը, որը, հանուն եգիպտահայ գաղութի, որդիական խորունկ երախտագիտություն է հայտնում Նորին Ս. Օծուխյան այցելության ուրախ առթիվ ստեղծված համերաշխության և միասնականության համար:

Հանուն եգիպտահայ քահանայից դասի, խոսք է առնում Տ. Արշամ Բահեևա Բոզոյանը, որն իր տպավորիչ ելույթի մեջ թարգմանն է հանդիսանում բոլոր ներկաների: Նա էջմիածնասիրական հավատարիմ զգացմունքներով շեշտում է, որ «չկա ազգապահպանում առանց Ս. էջմիածնի խորհրդի և առաքելության»:

Հանդիսության ժամանակ խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամ և «էջմիածին» ամսագրի խմբագրապետ Ա. Հատիսյանը, որն իր ոգեշունչ և տպավորիչ ելույթի մեջ, գեղեցկորեն բնութագրում է Վեհափառ Հայրապետի կյանքն ու մտածումները.

«Հուզումով է, որ կանգնել եմ Ձեր առաջ, այս հարկի ներքո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայությունը մի քանի խոսք ասելու, մի քանի մտքեր արտահայտելու, այս սրտառուչ հանդիպման առթիվ, որը

մեզ համախմբել է այստեղ: Հանդիսավոր և արտառու է միշտ նման հանդիպման պահը, երբ Ս. էջմիածնից և Մայր Աթոռից մարդիկ են գալիս, Սփյուռքի տարածքի վրա, հանդիպելու հայության հայրենաբաղձ բեկորների, որոնց արտի մեջ միշտ վառ է ու կանգուն Ս. էջմիածնի պաշտամունքը և սերը հայրենիքի:

Ահա, մի անգամ ևս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ջերմեջ է, այս հյուրընկալ և օրհնյալ երկրի մեջ, ուր մեր ժողովուրդը արտում է, աշխատում, ստեղծագործում և աղոթում իր պապերի հավատքով:

Հայոց Հայրապետը նման առիթներում արտահայտվելու հարազատ, թելադրական ու հասկանալի մի ձև ունի.

«Ս. էջմիածենն կուգանք, Հայրենիքն կուգանք»:

Վյս երկու բառերի մեջ, ազգիս սիրելի Հայրապետը խտացնում է ամբողջ մեր պատմությունը և մեր ժողովրդի զգացումը:

Ս. էջմիածին և հայրենի աշխարհ: Ի՞նչ է Ս. էջմիածինը: Ս. էջմիածինը խորհուրդ է, ոգի, լուսավորիչ է նա, պատմություն և պատգամ:

Իսկ հայրենիքը ա՛յն սրբազան հողն է, որի վրա դարերով ապրել, ստեղծագործել, երազել ու մահացել է մեր ժողովուրդը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը գալիս է Ս. էջմիածնից, որը, Ագաթանգեղոսի գեղեցիկ բացատրությամբ, ոչ միայն «Աթոռ է բահանայապետության», այլ նաև «տունն աղօթից ամենայն հաւատացելոց»:

Այսօր մենք ազգովին գոհություն պետք է մատուցանենք Աստուծո, որ Հայոց Հայրապետական Աթոռի վրա է գտնվում մեր սիրելի Վեհափառը, որը մեր եռամեծ վարդապետների տեսիլքով ու շնչով, նոր լույս է իջեցնում ամենայն հայոց Սրբություն Սրբոց էջմիածնի վրա, և լուսավորչի հավետ պլպլացող կանթելի լույսի մեջ, Արարատի նայվածքի տակ, զօր ու գիշեր, ծրագրում է և կառուցում, որպեսզի Մայր Աթոռ Ս. էջմիածինը շեն ու պայծառ մնա, միշտ կանգուն ու հավերժական:

Հաճախ ուզ գիշերներին կարելի է տեսնել Հայոց Հայրապետին Մայր Տաճարի շուրջ լոփն ու խոհուն ման գալիս, մտքում եկեղեցու և ժողովրդի, հայրենիքի ու Սփյուռքի ուրախություններն ու մտահոգությունները, երազներն ու հույսերը: Չկարծեք, թե հեշտ բան է Ամենայն Հայոց Հայրապետ լինել:

Սրտագին մի առիթ մեզ բերեց կրկին այստեղ, այս պատվական գաղութը, ինչպես

1963 թվականի նոյեմբերյան օրերին, հոկտեմբերյան ողջագուրումից հետո:

Առաջին անգամ այս գաղութն էր, որ վալեյից ողջագուրման արդար և ճշմարիտ բարիքները, երբ այս երկրի ամբողջ հայությունը ոտքի կանգնեց մեկ մարդու նման մեծարելու և որդիական իր երախտագիտությունը հայտնելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, նրա անմիջական նախաձեռնությամբ, աստվածային ներշնչման մի պահին Երուսաղեմում կատարած մեծ գործի համար:

Դա երկնային օրհնություն էր մեր Եկեղեցու և ժողովրդի համար, Վազգեն Հայրապետի տեսիլքով ձեռք բերված, որպեսզի մեր Եկեղեցին և ժողովուրդը լինեն միասնական, ապրեն համագալսյին նույն ձգտումներով և իղբալններով, նույն ուրախություններով և մտահոգություններով:

Մոտ մի տարի է անցել Երուսաղեմի ողջագուրումից:

Ողջագուրման այդ ոգին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գործունեության հիմնաքարն է հանդիսացել: Նորին Ս. Օծությունը բազմիցս շեշտել է, որ ինքը անսասան կամնա ողջագուրման վե՛մ քարի վրա, որովհետև դա բխում է մեր Եկեղեցու և ժողովրդի կենսական շահերից:

Երուսաղեմի ողջագուրման ոգու կենսագործման ճանապարհի վրա դեռ դժվարություններ կարող են լինել, բայց ժամանակն է, որ վճռականորեն և համարձակ կերպով վերջ տանք երկրորդական տարակարծություններին և սիրով, եղբայրաբար միասնական լինենք հիմնական հարցերում:

Թող լինեն տարակարծությունները, բայց դրանք թող չհասնեն եկեղեցիների գոնեին, կանգ առնեն այնտեղ և մենք բոլորս մաքուր սրտերով, բաց ճակատով մտնենք Աստուծո Տունը, համբուրվենք ու ասենք. «Ողջո՛ւն տուք միմեանց ի համբուր սրբութեան»:

Ես կարծում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրի մտածումների և զգացումների արտահայտիչը եղած կլինեմ, եթե ասեմ. «Եկե՛ք, սիրելի հայրենակիցնե՛ր, խոսքերից, ձեռքերից արտահայտություններից, անցնենք գործի և կյանքի վերածենք այն, ինչ անհրաժեշտ է մեր ժողովրդի համար»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մեկնում է Ադրիս-Աբեբա, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գերագույն Պետ, գլխավորելու մեր Եկեղեցու պատգամավորությանը, մասնակցելու Արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների հոգևոր պետերի համաժողովին:

Թույլ տվեք շնորհակալություն հայտնել ինձ ընծայված այս պատվի համար, որով ինձ

ևս առիթ տրվեց երկու խոսք ասել հայկական ջերմ այս հավաքույթի ընթացքում:

Այս օրը իմ կյանքի ամենաներշնչանիկ պահերից մեկն է:

Առավոտյան, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվում էր հայրապետական մաղթանք, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը, շատերի և իմ աչքերի մեջ արցունք կար և մեր բոլորի սրտերում կար հուզումը ազգային հպարտություն: Այսպիսի առիթները պատմական են և թելադրական: Ծգույնն էր այսպիսի բացառիկ պահերից՝ հայությունը լցվելու և հայ ապրելու համար: Լինե՞նք միասնական, մի և անբաժան՝ մեկ հավատքով, մեկ եկեղեցիով, մեկ հայրենիքով, մեկ հոգով ու շնչով: Եվ բարի ճանապարհ մաղթենք Հայոց Հայրապետին, որ Նրա ճանապարհը միշտ կանաչ լինի, ծաղիկների վրայով քայլի ու, բարձր բռնած՝ Իր սուրբ ձեռքերում հովվապետական Իր գավազանը, հայ ժողովրդին առաջնորդի դեպի միություն, ազգաշինություն և եկեղեցաշինություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովիբժական օրհնություն ներքո:

S. Կյուրեղ վարդապետ Գարիկյանը խոսում է Ս. Էջմիածնի խորհրդի և վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածին իր ուխտավորության օրերին, Վեհափառ Հայրապետից և Մայր Հայրենիքից ստացած իր խորունկ տպավորությունների մասին:

Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամ և վրահայոց թեմի առաջնորդ S. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը Կոմիտասյան «Հորովել»-ի և «Կիրիկիա» ազգային երգի կատարումով փոթորկում է բոլոր ներկաների սրտերը:

Վեհափառ Հայրապետի գավազանակիր Ասեն վարդապետ Բերբերյանը փայլուն հաշոդույթյամբ երգեց «Անտունի»-ն և «Հայաստան»-ը՝ «Նրբագույն խաղերու լավագույն մեկնաբանությունը»:

Ընդհանուր խանդավառության և սրտագին մթնոլորտում խոսք ասավ Վեհափառ Հայրապետը:

«Սիրելի՛ ժողովուրդ»:

Մեր խոսքը ըսելն առաջ, կուզենեմ կարծիք մը հայտնել:

Մենք շատ ուրախ ենք, որ այս հավաքույթը տեղի ունեցավ այս դահլիճին՝ Նուպարյան վարժարանի դահլիճին մեջ և Պրլբգտանյան սրահի մեջ:

Այստեղ հիշվեցան այն անունները, որոնք հիմնադիրը և բարերարները եղան այս կրթական հաստատության, մեծահամբավ

Նուպար Փաշայեն սկսյալ: Հիշվեցավ մանավանդ տեր և տիկին Պրլբգտանյաններու անունը, որոնց սրտի նվերով կառուցված է այս սրահը: Այս առիթով Մեր օրհնությունը անգամ մըն ալ կբերենք, բայր բարերարներու հիշատակին, և հատկապես մեր սիրելի Պրլբգտանյաններու լուսանոցի ձեռագր հիշատակին, որոնք կրցան իրենց նյութական միջոցները տրամադրել բարի և կրթական ազնիվ նպատակի մը:

Մենք կուզենեմ հիշել նաև անունը եզրապատահայ այն ազգայինին, որ իր գիտությունը և իր հաշվով բազմաթիվ շեքեր, դպրոցներ կառուցած է այստեղ. և այս դահլիճն ալ նույնպես իր ձեռակերտն է: Խոսքը կվերաբերի հարտարապետ Հրազդան Փայանին: Մեր գնահատանքի խոսքը և Մեր շնորհակալանքը կհայտնենք իրեն:

Մեզի շատ հուզեց տնօրեն Պապիկյանի խոսքը «մեծ բացակայի» մասին, որ աշակերտությունն է: Իրոք, այս անգամ Մենք առիթ չունեցանք Մեր և ձեր երեխաներուն հետ հանդիպելու: Այդ հանդիպումները, իրոք, ինչպես անցյալին մեջ, այս անգամ ալ պիտի հանդիսանային Մեզի համար ամենևն հանելի և գոտեպնդիչ պահերը: Իրոք, Մենք ալ համաձայն ենք տնօրենին հետ, որ մեծ բացակա մը եղավ աշակերտությունը այսօր: Իրողության մեջ մեր նոր սերունդը, մեր փոքրիկները միշտ պետք է մեծ ներկա ըլլան մեր բոլոր մտածումներուն, մեր բոլոր ծրագրերներուն և մեր աշխատանքներուն մեջ: Անոնցմով է, որ պիտի տեսականա՞ն հայ կյանքը Սփյուռքի պայմաններուն մեջ և անոնցմով է, որ պիտի իրականանան ձեր իդեալը, ձեր երազները: Անոնք պիտի ըլլան ջանակիրները ձեր իդեալներուն, ինչպես դուք եղաք ջանակիրները ձեր հայրերու իդեալներուն, շատ անգամ դժվարին պայմաններու մեջ: Անոնք իրենց երազներուն իրականացումը շտեպան, իրենց աչքերը փակեցին պանդխտության մեջ, բայց կխորհինք, թե բաժնվեցան կյանքի այս ափերեն այն մխիթարությամբ, որ իրենց ժառանգորդները, իրենց գավակները, այսինքն դուք՝ այդ հայկական զգացումներու և իդեալու ջանք բարձր բռնած, պիտի ընթանաք դեպի առաջ:

Այդ ջանքերը պետք է փոխանցվին մեր նոր սերունդին, մեր երեխաներուն: Ահա թե ինչո՞ւ անոնք միշտ պետք է ըլլան և մեան մեծ ներկան մեր բոլոր մտածումներուն, մեր բոլոր ծրագրերներուն և աշխատություններուն մեջ:

Սիրելի՛ սեղանակիցներ, սիրելի՛ ժողովուրդ, շեք գիտեք ի՞նչպես բացատրել զգացում մը, որ Մեր մեջ այնքան անեցավ այս

վերջին ամիսներուն ընթացքին այնտեղ, էջ-
միսամբի մեջ, և որուն մասին մինչև հիմա ոչ
ոտի չեն խոսած: Առաջին անգամն է, որ
կարտահայտվին: Մեր հոգեկան ներքին
պահանջն էր, որ այս տարի, հատկապես
այս տարի, 1965-ին, երբ մենք կպատ-
րաստվեինք ոգեկոչելու մեր բյուրավոր նա-
հատակներու սուրբ հիշատակը, այս տարի
անպայման արտասահման գայինք և Սփյուռ-
քի Մեր զավակներուն հետ այ հանդիպեինք:
Մեզի համար հոգեկան անհրաժեշտություն
մըն էր այդ:

Աղդիս-Աբեբաշի ժողովը անսակ մը Աս-
տուծո պարզեր հանդիսացավ անիրք ստեղ-
ծելու, որպեսզի Մենք արտասահման գանք,
նեզի հանդիպինք և զուցե այսօրն այ բա-
վարար ըլլա: Մեր իղձը իրականացավ: Ապ-
րումներու ամբողջ այխարհ մը կարքնաւ
Մեր հոգին ներս, մեր հանձնակներու
հիսնամյակին ոգեկոչման անիրքով: Այդ ապ-
րումները Մեզ կմղեն ելլել և գալ ձեզի,
պանդուխտ զավակներ հայ ժողովուրդի:

Մարդկային և բնական է, որ մարդիկ
իրենց ներքին ուժեղ ապրումներու և զգա-
ցումներու արտահայտության հանապարհին
վրա կետեր ստեղծեն, ժամանակի ու տարա-
ժուրյան մեջ, և կեդրոնաճան պահ մը անեց
վրա, ավելի ամբողջական և իրական ապրե-
լու համար զանոնք: Ահա այդպիսի հանգրվան
մըն է 1965 թվականը մեզ ամենուս համար:
Եվ կխորհրդենք հանգիս, որ արդյո՞ք մենք
բավարար չափով կկարողանանք և պիտի
կարողանանք մինչև հատակը իջնել այդ ող-
բերգության և չափել անոր անավորությունը:
Պիտի կարողանանք լավ հասկնալ այն ան-
պատմելի տառապանքներու և շարշարանքնե-
րու անվերջանալի շարանը: Գուցե մարդկայ-
նորեն անկարելի է: Քայքայ այս պատմական
հանգրվանին մենք պիտի փորձենք, և պետք
է փորձենք, մեր մեռելները ապրեցնել և
խոսեցնել: Մենք ուրախ ենք այս անիրքով
վկայությունը բերելու ձեզի Մայր Հայրենի-
քեն, քե այնտեղ ևս կա՝ այդ տիրական ապ-
րումը, կխոստովանինք Մենք ձեզի բոլորիդ,
քե նույնիսկ ավելի և շատ ավելի, քան Մենք
կսպասեինք այնտեղ:

Ասիկա զարմանալի կերպով ցույց կուտա,
քե հայ ժողովուրդը իր հոգիով նույնն է ամեն
տեղ և ամեն տեղ հիմնական հարցերու շուրջ
միատեղ կմտածե: Փոքրակված է հայության
հոգին ամեն տեղ:

Ամենաբարձր մտավորականն սկսյալ,
մինչև ամենախոնարհ և համեստ աշխատող,
բանվորը և գյուղացին այդ հուզումներով
այեկողմված են:

Հայաստանի և Մայր Արտ Ս. էջմիածնի
մեջ ապրիլ 24-ի օրը պիտի նշվի հանդիսա-
վոր կերպով:

Մեր հայու սրտերը սակայն կվկայեն, քե
1965-են հետո եղեմի հիշատակը մեզի հա-
մար չի քառամիր: Մեր ազգային այդ մեծ
ողբերգության զիրքը չի կրնար փակվիլ տա-
կավին: Հիսնամյակը հանգրվան մըն է
միայն: Մենք զոնն այդ զգացումը ունինք, որ
պիտի բացվին եւր նախապարհներ, որպեսզի
մենք միշտ սուրբ պահենք այդ հիշատակը և
աշխատինք ամեն մեկս մեր կերպով իրա-
կանացեւ, կյանքի կոչել այն երազները,
որոնց համար հանատակվեցան մեր հայրե-
րը: Եթե այս տարի՝ 1965-ը առավելապես
պիտի ըլլա մեզի համար սուրբ և աղոթքի
տարի, բայց զայն մենք պետք է վերածենք
եւս ուխտի: Այդ ուխտը մեր սրտին մեջ ա-
նա՞ծ, առաջ պիտի երբանք, հիսուն տարի ալ,
մինչև որ հայ ժողովուրդի արդարություն
ըլլա: Եվ եթե մարդկության մեջ մարդկու-
րյուն կա, պետք է հայ ժողովուրդին վերջա-
պես արդարություն ըլլա:

Միւրեքի՝ ժողովուրդ, Մենք վստահ ենք, որ
առնել ոչ միայն Մեր զգացումներն են, այլ
ամբողջ մեր ժողովուրդին զգացումներն են,
անկասկա այլևայլ երկրորդական հարցերն,
որոնք կարելի է այստեղ այնտեղ հանդիպիլ:
Աղոնք բոլորը երկրորդական են:

Կեդրոնական, հատկապես այս տարի,
այս մտածումներուն և զգացումներուն ապա-
նա՞ծին վրա և ամրանանք: Մեր ուխտին մեջ
մնանք անշարժ, մինչև վերջնական և պայ-
ծառ հաղթանակ: Այս զգացումներով Մենք
եկանք արտասահման, և անզուսպ պահանջ-
քը զգացինք այս բոլորը բնելու, Սփյուռքի
Մեր պանդուխտ զավակներուն և այս զգա-
ցումներով կրթմովինք ձեզմե և կրեսնք ձեզի
բոլորիդ, Մնացե՛ք բարով, մնացե՛ք խաղա-
ղությանը, Աստուծո օրհնությունը ձեզի հետ,
այժմ և անվիտյան: Ամեն:

*Հնդուներու յոթնամյակի հետո Վեհափառ Հայ-
րապետը բոլոր ներկաների երախտագետ ար-
տահայտությունների և բարեմաղթություն-
ների մեջ առաջնորդվում է Հյուրանոց, նույն
գիշեր ժամը 2.30-ին Եթովպիա մեկնելու
համար:*

Հունվարի 15-ին, ուրբաթ, առավոտյան
ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը Կահիրեի
օդանավակայանից մեկնում էր դեպի Աղդիս-
Աբեբա, իր շքախմբի անդամների հետ:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում է
ողջ հայ գաղութը, իր ազգային-եկեղեցական
իշխանությունից, բոլոր կազմակերպություն-
ների, մամուլի ներկայացուցիչներով:

Շնորհիվ եթովպական օդանավային ընկերության Կահիրեի ընդհանուր տնօրեն Հակոբ Էֆսերեյանի ջանքերի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին տանող օդանավը տեղ է գրավում պետական անձնավորությանց համար վերապահված մասում, ուր ամբողջ ժողովուրդը առիթն է ունենում իր որդիական

վերջին հարգանքները մատուցելու նորին Ս. Օթուֆյան, Նրան առաջնորդելով դեպի օդանավի սանդուղքը:

Ժամը 4-ին ինքնաթիռը բարձրանում է եթեր և ուղղություն է վերցնում դեպի Եթովպիա, ներկաների ծափերի տարափի տակ և հուզումի ալեկոծությունների մեջ:

